«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՈՎ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2018թ.

ԵՐԵՎԱՆ 2019

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	6
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	9
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	10

BAKER TILLY
ARMENIA

22 Hanrapetutyan Street
0010 Yerevan, Republic of Armenia
Tel: +374(10) 544-301
Tel: +374(10) 544-309
Fax: +374(10) 562-404
Email: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.com

01.03.2019
N 011901

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Փ. Գևորգյան

Աուդիտորական ծառայությունների իրականացման
լիցենզիա թիվ 054՝ տրված ՀՀ ֆինանսների
և էկոնոմիկայի նախարարության կողմից

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ
Մասնակցին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «ԷԿԼՕՖ» ՈՒՎԿ ՍՊԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համար շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև հաշվապահական քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող ծանոթագրություններ:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր
Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրարելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար
Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-երի համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար
Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն

ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ Ընկերության ֆինանսական տեղեկատվության կամ գործունեության վերաբերյալ՝ ֆինանսական հաշվետվությունների մասին կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատվություն ենք կրում աուդիտորական աշխատանքների ուղղորդման, վերահսկման ու կատարման համար: Մենք լիովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցվում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Աուդիտոր
Լ. Ղևոնդյան

01.03.2019թ.

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2018թ.	2017թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	108,762	162,540
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(73,730)	(39,857)
Զուտ տոկոսային եկամուտ		**35,032**	**122,683**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	92,362	59,558
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(3,183)	(2,433)
Ստացված զուտ կոմիսիոն վճարներ		**89,179**	**57,125**
Արտարժութային գործարքներից ստացված զուտ վնաս		(157)	237
Այլ գործառնական եկամուտ	8	22,471	29,720
Արժեզրկման զծով հակադարձում	9	201,191	42,151
Անձնակազմի զծով ծախսեր	10	(110,544)	(107,477)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	11	(51,054)	(43,343)
Այլ ծախսեր	12	(13,373)	(11,407)
Շահույթ՝ մինչև հարկվելը		**172,745**	**89,689**
Շահութահարկի զծով ծախս	13	(34,967)	(21,169)
Շահույթ՝ հարկումից հետո		**137,778**	**68,520**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք		-	-
Համապարփակ ֆինանսական արդյունք		**137,778**	**68,520**

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018թ դեկտեմբեր 31-ի դրությամբ

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	2018թ.	2017թ.
Ակտիվներ			
Դրամական միջոցներ և բանկային հաշիվներ	14	8,926	2,783
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	89,990	166,600
Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր	16	1,733,382	1,106,860
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	17	12,977	13,906
Հետաձգված հարկային ակտիվներ		-	19,462
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	18	17,150	19,735
Այլ ակտիվներ	19	11,258	26,148
Ընդամենը՝ ակտիվներ		1,873,683	1,355,494
Պարտավորություններ			
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	20	20,854	-
Ներգրավված փոխառություններ	21	983,924	787,572
Հետաձգված հարկային պարտավորություն	13	34,237	-
Այլ պարտավորություններ	22	25,197	32,494
Ընդամենը՝ պարտավորություններ		1,064,212	820,066
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ	23	575,590	575,590
Կուտակված շահույթ		233,881	(40,162)
Ընդամենը՝ կապիտալ		809,471	535,428
Ընդամենը՝ պարտավորություններ և կապիտալ		1,873,683	1,355,494

Ստեփան Թորոսյան
Գործադիր տնօրեն

Կարինե Պապուջյան
Գլխավոր հաշվապահ

28.02.2019թ.

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	575,590	(108,682)	466,908
Տարվա վնաս	-	68,520	68,520
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	575,590	(40,162)	535,428
ՖՀՄՍ 9-ի ներդրման ազդեցություն	-	136,265	136,265
Վերահաշվարկված մնացորդ 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	575,590	96,103	671,693
Տարվա շահույթ	-	137,778	137,778
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	575,590	233,881	809,471

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2018թ.	2017թ.
Դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից		
Ստացված տոկոսներ	267,067	182,014
Վճարված տոկոսներ	(60,879)	(34,635)
Կորուստների վերականգնում	107,409	99,663
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	87,841	54,035
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	(79,554)	(75,609)
Վճարված հարկեր	(35,623)	(32,536)
Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվներին պարտավորությունների փոփոխությունը	**286,261**	**192,932**
Տեղաբաշխված միջոցների նվազում / (ավելացում)	(351,709)	(415,752)
Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից	(134,941)	(54,902)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**(200,389)**	**(277,722)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(4,314)	(2,428)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**(4,314)**	**(2,428)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Բանկերի նկատմամբ պարտավորությունների ավելացում	20,833	-
Ներգրաված փոխառությունների ավելացում	190,373	282,121
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	**211,206**	**282,121**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/ (նվազում)	**6,503**	**1,971**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(298)	48
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում	2,811	792
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում	**9,016**	**2,811**

1-25 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեություն

ԷԿԼՕՖ ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) իրավաբանական անձ հանդիսացող առևտրային կազմակերպություն է:

Ընկերությունը գրանցվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006թ. հոկտեմբերի 17-ի N 617 Ա որոշմամբ: Վարկային կազմակերպության գրանցման վկայականի համարն է՝ 17:

Համաձայն կանոնադրության Ընկերության գործունեության նպատակներն են.

- փոխառություններ և վարկեր տրամադրել գործունեության այն տեսակներին, որոնք հնարավորություն կտան ֆիզիկական անձանց (անհատ ձեռնարկատերերին) բավարարելու իրենց սոցիալ-տնտեսական պայմանները և ամրապնդելու իրենց ինքնուրույնությունը, ապահովելու այն գործունեությամբ, որի համար ստանում են փոխառություններ և վարկեր, որով կստեղծեն որոշակի եկամուտներ, ինչպես փոխառությունները և վարկերը ետ վերադարձնելու, այնպես էլ եկամուտներ ունենալու համար.
- փոխառություններ կամ վարկեր տրամադրել այն անհատ ձեռնարկատերերին կամ իրավաբանական անձանց, որոնք նպաստում են փոքր և միջին բիզնեսի կայացմանը և զարգացմանը, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծմանը և պահպանմանը.
- փոխառություններ կամ վարկեր տրամադրել եկեղեցիներին, եկեղեցահար հաստատություններին, քրիստոնեական կազմակերպություններին, ոչ առևտրային կազմակերպություններին և ՀՀ համայնքներին, որոնք ուղղված են սոցիալական, կրթական, առողջապահական և այլ ծրագրերի կատարմանը:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Էջմիածին, Բաղրամյան 2/1:

2. Գործարար միջավայր

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է հիմնականում Հայաստանում: Հետևաբար Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Որպես զարգացող շուկա, Հայաստանը չունի կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող զարգացած երկրներում:

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն դրանք ենթակա են հաճախակի փոփոխությունների և կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ, ինչը, այլ իրավական և ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

Հետևաբար, Հայաստանում ծավալված գործունեությունը կապված է որոշակի ռիսկերի հետ, որոնք բնորոշ չեն զարգացած երկրների շուկաներին: Նման ռիսկերը և դրանցից բխող հետևանքները կարող են ազդեցություն թողնել Ընկերության գործունեության վրա կանխատեսելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

3. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (”ՖՀՄՍ”) պահանջների համաձայն:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար՝ բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, իսկ ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են պատմական արժեքով:

Գործառնական և ներկայացման արժույթ

Ընկերության գործառնական արժույթն է հանդիսանում ՀՀ դրամը (դրամ), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրամը հանդիսանում է նաև սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումները և համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում՝ որում վերանայվել են և այն ապագա ժամանակշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները

Սույն ֆինանսական հաշվետվություններում Ընկերությունը կիրառել է ՖՀՄՍ 9-ը և ՖՀՄՍ 7-ի վերանայված տարբերակը, որոնք ուժի մեջ են մտնում 2018 թվականի հունվարի 1-ին և այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

ՖՀՄՍ 9 Ֆինանսական գործիքներ

ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39-ին 2018 թվականի հունվարի 1-ից և այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ընկերությունը չի վերաներկայացնելու ֆինանսական գործիքների վերաբերյալ համեմատական տեղեկատվությունը 2017 թվականի համար: ՖՀՄՍ 9-ի ներդրման արդյունքում առաջացած տարբերությունները գրանցվել են ուղղակիորեն չբաշխված շահույթում և այլ պահուստներում 01.01.2018-ի դրությամբ և բացահայտվել են Ծանոթ. 5 –ում:

Դասակարգման և չափման փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ը պահանջում է գնահատել բոլոր ֆինանսական ակտիվները, բացի բաժնային գործիքներում ներդրումներից և ածանցյալ գործիքներից, համակցված մոտեցման հիման վրա՝ ելնելով ընկերության ակտիվները կառավարելու բիզնես մոդելի և գործիքների դրամական հոսքերի բնութագրիչներից: ՀՀՄՍ 39-ի չափման կատեգորիաները կփոխարինվեն հետևյալ կատեգորիաներով .

•Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող

•Իրական արժեքով՝ այլ համապարփակ եկամտի միջոցով չափվող

•Ամորտիզացված արժեքով չափվող Ֆինանսական պարտավորությունների հաշվառման ՀՀՄՍ 39-ի պահանջները էապես չեն փոխվել:

Արժեզրկման հաշվարկման փոփոխություններ

ՖՀՄՍ 9-ը հիմնովին փոխում է վարկերի արժեզրկման նկատմամբ մոտեցումը: Ստանդարտը փոխարինում է ՀՀՄՍ 39-ի՝ կրած վնասների մոտեցումը ակնկալվող վարկային կորուստների (ԱՎԿ) մոտեցմամբ: Ընկերությունը ակնկալվող վարկային կորուստների պահուստ է ճանաչել բոլոր վարկերի և պարտքային ֆինանսական գործիքների համար, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ինչպես նաև վարկային պարտավորվածությունների և ֆինանսական երաշխիքի պայմանագրերի համար: Արժեզրկումից կորստի հաշվարկը կատարվել է եռափուլ գործընթացով, որն արտացոլում է ֆինանսական գործիքի վարկային որակի նվազումը: Առաջին փուլ դասակարգված գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները գնահատվել են հաշվի առնելով հաջորդ տասներկու ամիսների ընթացքում դեֆոլտի հավանականությունը: Երկրորդ փուլ դասակարգված գործիքների համար ակնկալվող վարկային կորուստները գնահատվել են հաշվի առնելով գործիքի ակնկալվող մարման ժամկետի ընթացքում դեֆոլտի հավանականությունը: Երրորդ փուլ դասակարգված գործիքների համար՝դեֆոլտի հավանականությունը սահմանվել է 100%:

Ընկերության կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված են ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք թողարկվել են, բայց Ընկերության ֆինանսական հաշվետվությունների հրապարակման օրվա դրությամբ դեռևս ուժի մեջ չեն մտել: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները ուժի մեջ մտնելուց հետո:

ՖՀՄՍ 16 «Վարձակալություն»

ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 16 «Վարձակալություն» վարձակալության հաշվառման նոր ստանդարտը 2016թ. հունվարին: Նոր ստանդարտը զգալիորեն չի փոխում վարձակալության հաշվառումը վարձատուների համար: Սակայն, այն պահանջում է վարձակալներին ճանաչել վարձակալությունների մեծ մասը իրենց հաշվապահական հաշվեկշռում որպես վարձակալության գծով պարտավորություն՝ համապատասխան ակտիվի օգտագործման իրավունքի հետ մեկտեղ: Վարձակալները պետք է կիրառեն միասնական մոդել բոլոր ճանաչված վարձակալությունների համար, բայց հնարավորություն կունենան չճանաչել կարճաժամկետ վարձակալությունները և ցածրարժեք ունեցող ակտիվների վարձակալությունը: Ընդհանուր առմամբ, շահույթի կամ վնասի

ճանաչման կարգը նման է այսօրվա ֆինանսական վարձակալության հաշվառմանը՝ շահույթ կամ վնասում տոկոսային եկամտի և մաշվածության առանձին ճանաչմամբ: ՖՀՄՍ 16 ուժի մեջ է մտնում 2019 թ.-ի հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Վաղաժամկետ կիրառումը թույլատրելի է, պայմանով, որ հասույթի նոր ստանդարտ ՖՀՄՍ 15-ը կիրառվում է նույն օրը: Ընկերությունը չի նախատեսում ՖՀՄՍ 16 վաղաժամկետ ընդունում և ներկայումս գնահատում է դրա ազդեցությունը:

Գործունեության անընդհատությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ստացված եկամուտը հնարավոր է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, երբ հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Ընկերությունից, և ծախսը հնարվոր է արժանահավատորեն չափել:

Տոկոսային ծախսեր և եկամուտներ

Ստացվելիք տոկոսային եկամուտները, ինչպես նաև վճարվելիք տոկոսային ծախսերը Վարկային կազմակերպությունը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից:

Միջնորդավճարներից և այլ նմանատիպ վճարներից եկամուտներ ու ծախսեր

Միջնորդավճարները, վարձավճարները և այլ եկամտային ու ծախսային հոդվածները հիմնականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով, ծառայությունների մատուցման ընթացքում:

Փոխարժեքային տարբերությունների ճանաչում

Արտարժութային գործարքներից եկամուտները (վնասը) ներառում է արտարժույթով ակտիվների կամ պարտավորությունների վերագնահատումից եկամուտը (վնասը):

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով՝ կիրառելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժութային հոդվածների վերահաշվարկից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես ծախս կամ եկամուտ:

Ստորև ներկայացվում են ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Ընկերության կողմից օգտագործված տարեվերջյան փոխարժեքները.

	31 Դեկտեմբեր 2018թ.	*31 Դեկտեմբեր 2017թ.*
ՀՀ դրամ/ 1ԱՄՆ դոլար	483.75	484.1

Հարկային հաշվառում

Հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, որի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտներից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույքներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորությունների մեթոդի համաձայն: Հետաձգված հարկերը հաշվի են առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների միջև, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ հետաձգված շահութահարկը առաջացել է գուդվիլի կամ կազմակերպությունների միավորում չհանիդիսացող գործառնություններում ակտիվների կամ պարտավորությունների նախնական ճանաչման ժամանակ և ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ ապագայում առկա կլինի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույքով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույքների վրա:

ՀՀ-ում գործում են նաև բազմաթիվ այլ գործառնական հարկեր, որոնք հաշվարկվում են ելնելով Ընկերության գործունեությունից: Այս հարկերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են 'այլ ծախսեր' հոդվածում: Անուղակի հարկերի գումարներն ներառվում են այն նյութական կամ ոչ նյութական արժեքի գումարի մեջ որին վերաբերվում են այդ հարկերը:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներն ու դրանց համարժեքները ներառում են հաշիվները բանկերում: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում է ուղղակի մեթոդով:

Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը հաշվեկշռում ճանաչում է այն ժամանակ, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական առուվաճառքի դեպքում դրանք ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ: Սովորական ճանապարհով ձեռք բերված ֆինանսական գործիքները, որոնք հետագայում պետք է հաշվառվեն իրական արժեքով, գործարքի օրվա և պայմանագրի օրվա միջև ընկած ժամանակահատվածում հաշվառվում են նույն եղանակով, որով հաշվառվում են ձեռք բերված գործիքները:

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները չափվում են իրական արժեքով՝ գումարած, ներդրումների դեպքում, գործարքին անմիջապես վերագրելի ծախսերը, բացառությամբ ֆինանսական արդյունքներում ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ներդրումները:

Սկզբնական ճանաչումից հետո, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններին չվերաբերող բոլոր ֆինանսական պարտավորությունները (ներառյալ վաճառքի համար պահվողները) չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորությունները հետագայում հաշվառվում են իրական արժեքով:

2018 թվականի հունվարի 1-ից հետո Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգում է հիմնվելով ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելի և ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերի պայմանագրային բնութագրի վրա, հետևյալ կերպ.

- Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ
- Իրական արժեքով չափվող այլ համապարփակ եկամուտներով հաշվառվող ֆինանսական ակտիվներ
- Իրական արժեքով՝ շահույթ/վնասով չափվող ֆինանսական ակտիվներ;

Մինչև 2018 թվականի հունվարի 1-ը Ընկերությունը իր ֆինանսական ակտիվները դասակարգել է ըստ հետևյալ դասերի՝ վարկեր և դեբիտորական պարտքեր, ֆինանսական արդյունքներում իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական գործիքներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

2018 թվականի հունվարի 1-ից հետո Ընկերությունը Հաճախորդներին տրված վարկերը, դեբիտորական պարտքերը, այլ ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարվում են հետևյալ 2 պայմանները.

- ակտիվը պահվում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքման համար ակտիվներ պահելը.
- ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են: Նշված պայմանների մանրամասները ստորև.

Բիզնես մոդելի գնահատում

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվները որպես հետագայում ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով չափվող՝ ֆինանսական ակտիվների կառավարման համար Ընկերության բիզնես մոդելի հիման վրա: Ընկերությունը գնահատում է, թե արդյոք իր ֆինանսական ակտիվները բավարարում են այդ պայմանին՝ հիմք ընդունելով բիզնես մոդելի նպատակը, ինչպես դա որոշվել է Ընկերության առանցքային կառավարչական անձնակազմի կողմից: Ընկերության բիզնես մոդելը կախված չէ առանձին գործիքի վերաբերյալ ղեկավարության մտադրություններից: Հետևաբար, այս պայմանը գործիք առ գործիք դասակարգման մոտեցում չէ և պետք է որոշվի խմբավորման ավելի բարձր մակարդակով:

Պայմանագրային դրամական միջոցների հոսքեր, որոնք միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ են

Ընկերությունը դասակարգում է ֆինանսական ակտիվը որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող, եթե այն բավարարում է միայն մայր գումարի և դրա չմարված մասի վրա հաշվարկված տոկոսների վճարումների թեստին:

Այդ թեստի շրջանակներում <Մայր գումարը> սահմանվում է որպես ֆինանսական ակտիվի իրական արժեք դրա սկզբնական ճանաչման պահին և կարող է փոփոխվել ֆինանսական ակտիվի գործողության ժամկետի ընթացքում: Տոկոսների որոշման ամենակարևոր տարրը դա փողի

ժամանակային արժեքի և վարկային ռիսկի հաշվի առնումն է: Մայր գումարի և տոկոսների վճարման թեսթը անցկացնելիս Ընկերությունը օգտագործում է իր դատողությունները և հաշվի է առնում այնպիսի գործոններ, ինչպիսիք են ֆինանսական գործիքի արժույթը և ժամանակահատվածը , որի համար տոկոսադրույքը սահմանվում է:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Վարկային կազմակերպության կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Հետագայում վարկի հաշվեկշռային արժեքը որոշվում է օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հաճախորդներին տրամադրված վարկերը, որոնք չունեն մարման հաստատուն ժամկետներ, հաշվառվում են ակնկալվող մարման ժամկետի վրա հիմնված արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Հաճախորդներին տրված վարկերի գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկման կորուստների պահուստներով:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Հաշվեկշռային ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման աստիճանը:
Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում են արժեզրկված և արժեզրկումից կորուստը ճանաչվում է ակտիվի ձևավորման պահին: Ընկերությունը մշտապես վերահսկում է արժեզրկման ենթակա բոլոր ակտիվները: Ընկերությունը դասակարգում է վարկերը հետևյալ երեք փուլերի մեջ՝

- առաջին փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց պարտքային որակը սկզբնական ճանաչումից հետո էապես չի նվազել , կամ որոնց նկատմամբ կիրառվել է ցածր վարկային ռիսկի հետ կապված պարզեցման մոտեցում
- երկրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով սկզբնական ճանաչումից հետո արձանագրվել է պարտքային ռիսկի էական ավելացում, սակայն վարկային կորստի վերաբերյալ օբյեկտիվ տվյալներ չկան
- երրորդ փուլ, որը վերաբերում է այն ակտիվներին, որոնց գծով առկա են արժեզրկման վերաբերյալ օբյեկտիվ վկայություններ:

Սպասվող պարտքային կորուստները (ՍՊԿ) դա պարտքային կորուստների միջին կշռված մեծությունն է, որը հաշվարկվում է դեֆոլտի (պարտքային կորուստների) հավանականության կշռման միջոցով: Ակտիվների պորտֆելային գնահատման ժամանակ յուրաքանչյուր ակտիվի գծով ՍՊԿ հաշվարկվում է որպես հետևյալ երեք բաղադրիչների արտադրյալ.

- ակնկալվող դրամական հոսքեր, բերված ներկա արժեքի սկզբնական կամ տվյալ պահին կիրառելի վերանայված արդյունավետ տոկոսադրույքով,
- հաջորդ 12 ամսվա կամ վարկի մնացած ժամկետի համար հաշվարկված դեֆոլտի հավանականություն
- դեֆոլտային վարկերի գծով կորուստների մեծություն:

Երրորդ փուլի այն վարկերը, որոնք պահուստի հաշվարկի օրվա դրությամբ, ինչպես նաև դրան նախորդող երեք ամսվա ընթացքում ունեն առավելագույնը 1-30 ժամկետանց օր, վերադասակարգվում են երկրորդ փուլ:
Երրորդ փուլի այն վարկերը, պահուստի հաշվարկի օրվա դրությամբ, ինչպես նաև դրան նախորդող երեք ամսվա ընթացքում ունեն 0 ժամկետանց օր, վերադասակարգվում են առաջին փուլ:

Երկրորդ փուլի այն վարկերը, պահուստի հաշվարկի օրվա դրությամբ, ինչպես նաև դրան նախորդող երեք ամսվա ընթացքում ունեն 0 ժամկետանց օր, վերադասակարգվում են առաջին փուլ: Առաջին փուլում գտնվող վարկերի համար ճանաչվում է 12 ամսվա ՍՊԿ, իսկ երկրորդ և երրորդ փուլերի վարկերի համար՝ ամբողջ ժամկետի համար հաշվարկված ՍՊԿ:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակիտվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապաճանաչվում է, երբ.

- լրացել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը
- Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանել է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ համաձայն փոխանցման համաձայնագրի, և
- Ընկերությունը (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցել և չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Ընկերությունը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու իրավունքը և չի փոխանցել ու չի պահպանել ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, ինչպես նաև չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը ճանաչվում է մինչև Ընկերության՝ ֆինանսական ակտիվում շարունակական մասնակցությունը: Փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև ստացած շարունակական մասնակցությունը որոշվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեքը կամ փոխհատուցման վճարվելիք գումարը, որ Ընկերությունից կարող է պահանջվել:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է այն ժամանակ, երբ այն մարվում կամ չեղյալ է համարվում, կամ լրանում է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Երբ գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է էականորեն տարբերվող պայմաններով, բայց միևնույն փոխառուին վերաբերող պարտավորությամբ, կամ էականորեն փոփոխվում են գոյություն ունեցող պարտավորության պայմանները, նման փոխանակումը կամ փոփոխությունը պետք է հանգեցնի սկզբնական պարտավորության ապաճանաչման և նոր պարտավորության ճանաչման, իսկ համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկային կազմակերպությունը ակտիվների հնարավոր կորուստների պահուստ

Վարկային կազմակերպության ակտիվների դասակարգումը և հնարավոր կորուստների պահուստների ձևավորումը իրականացնում է ՝՝Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգի՝՝ համաձայն:

Պաշարներ

Պաշարների հաշվապահական հաշվառումը կատարվում է համաձայն ՀՀՄՍ 2 ստանդարտի: Պաշարները հաշվառվում են ձեռք բերման արժեքով: Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարները ելքագրվում են ՝՝Առաջին Մուտք Առաջին Ելք՝՝ (ՖԻՖՈ) մեթոդով:

Վարձակալություն

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը համապատասխանում է ակտիվի ճանաչման չափանիշներին, սկզբնապես չափվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով): Հիմնական միջոցների միավորի սկզբնական արժեքն ընդգրկում է նրա գնման գինը, հարկերը, ներկրման տուրքերը, պարտադիր այլ վճարները, որոնք համապատասխան մարմնի կողմից ենթակա չեն Վարկային կազմակերպությանը ետ վերադարձման:

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ՝ հաշվի առնելով արժեզրկումից կուտակված կորուստը: Մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդով ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են

Համակարգչային սարքավորումներ	3 տարի
Փոխադրամիջոցներ	5 տարի
Գրասենյակային գույք	5 տարի
Վարձակալած հիմնական միջոցների վրա կատարված կապիտալ բնույթի ծախսեր	20 տարի

Հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Այն ծախսումները, որոնք բարձրացնում են հիմնական միջոցի միավորի շահագործման արդյունավետությունը սկզբնապես գնահատված նորմատիվային ցուցանիշների համեմատ, ճանաչվում են որպես կապիտալ բնույթի ծախսումներ և ավելացվում են ակտիվի սկզբնական արժեքին: Նշված ծախսումներն ամորտիզացվում են՝ կիրառելով գծային մեթոդը՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում, եթե դրանք չեն գերազանցում տվյալ տարվա (հիմնական միջոցի տվյալ միավորի արժեքին նշված ծախսումները ավելացնելու տարվա) հունվարի 1-ի դրությամբ հիմնական միջոցի մնացորդային արժեքը, հակառակ դեպքում ամորտիզացվում են օգտակար ծառայության ամբողջ ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի դուրսգրումից կամ իրացումից առաջացած արդյունքը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում է որպես եկամուտ կամ ծախս:

Հիմնական միջոցների իրական (շուկայական) արժեքի էական տատանման դեպքում դրանք վերագնահատվում են: Վերագնահատման արդյունքները արտացոլվում են ՀՀՄՍ 16-ով սահմանված կարգով:

Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերը:

Ոչ նյութական ակտվիները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են ինքնարժեքով: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտվիները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և ցանկացած կուտակված արժեզրկման ծախս: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի և անորոշ: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցողները ամորտիզացվում են գծային մեթոդով 10 տարվա ընթացքում և գնահատվում են արժեզրկման համար, երբ առկա են արժեզրկման հատկանիշները: Որոշելի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվների ամորտիզացիայի ժամանակահատվածներն ու մեթոդները վերանայվում են առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին:

Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, բայց տարին մեկ անգամ ստուգվում են արժեզրկման համար անհատական կամ դրամային միջոցներ ստեղծող միավորի մակարդակով: Օգտակար ծառայության անորոշ ժամկետ ունեցող ակտիվի օգտակար ծառայության ժամկետը վերանայվում է յուրաքանչյուր տարի՝ պարզելու համար, թե արդյոք ակտիվի օգտակար ծառայության ժամկետը դեռևս անորոշ է գնահատվում:

Փոխառություններ

Փոխառությունները, որոնք ներառում են հաճախորդներից ներգրավված փոխառություններ, սկզբնապես ճանաչվում են ստացված զուտ մուտքերի իրական արժեքով՝ հանած անմիջապես վերագրելի գործառնական ծախսերը: Սկզբնական գնահատումից հետո փոխառություններն հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքերի մասին հաշվետվությունում այն ժամանակ, երբ ապաճանաչվում են պարտավորությունները, ինչպես նաև ամորտիզացիոն ընթացակարգի միջոցով:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է այն ժամանակ, երբ Ընկերությունն անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավական կամ կառուցողական պարտավորություն և, հավանական է, որ պարտավորության մարումը կպահանջի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք և հնարավոր կլինի պարտավորության գումարը արժանահավատորեն գնահատել:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվանցվում են և զուտ գումարը արտացոլվում է հաշվեկշռում, եթե գոյություն ունի ճանաչված գումարների հաշվանցման օրենսդրորեն հաստատված իրավունք, և առկա է զուտ գումարների հիման վրա հաշվանցման կամ ակտիվի իրացման ու միաժամանակ պարտավորության մարման մտադրություն:

5. ՖՀՄՍ 9-ի անցման ազդեցություն

Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս 01.01.18թ. ՀՀՄՍ 39-ից ՖՀՄՍ 9-ին անցման հիմնական արդյունքի մանրամասնեցված բացվածքը , որն իր ազդեցությունն է ունեցել սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության վրա:

հազար դրամ

Համաձայն ՀՀՄՍ 39-ի			Համաձայն ՖՀՄՍ 9-ի				
Հոդված	*Դաս*	*Գումար*	*Վերադասակարգում*	*Պահուստավորում*	*Հոդված*	*Դաս*	*Գումար*
Հաճախորդներին տրված վարկեր	Վարկեր և այլ փոխատվություններ	1,106,860	-	168,015	Հաճախորդներին տրված մորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր	Ամորտիզացված արժեքով հաշվառվող	1,274,875
Հետաձգված հարկ	X			(31,750)		X	(34,066)
Ընդամենը				136,265			

Ընկերությունը 01.01.18թ. դրությամբ չի ունեցել որևէ ակտիվի գծով վերադասակարգման արդյունք և ՀՀՄՍ 39-ից ՖՀՄՍ 9 անցման հիմնական արդյունքը եղել է պահուստավորման նոր մոտեցումների կիրառման հետևանքով:

6. Զուտ տոկոսային եկամուտ

հազար դրամ

	2018թ.	2017թ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ		
Ժամկետային ավանդներ բանկերում	5,287	7,336
Հաճախորդներին տրված վարկեր	102,785	154,809
Այլ	690	395
	108,762	**162,540**
Տոկոսային և նմանատիպ ծախսեր		
Ստացված փոխառություններ	(73,730)	(39,857)
	(73,730)	**(39,857)**
Զուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	**35,032**	**122,683**

7. Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Ñ³½³ñ ¹ñ³Ù

	2018թ.	2017թ.
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ		
Հաճախորդներին տրված մորտիզացված արժեքով հաշվառվող վարկերի սպասարկում	92,362	59,558
	92,362	**59,558**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր		
Միջնորդավճարների գծով ծախսեր	(3,183)	(2,433)
	(3,183)	**(2,433)**
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	**89,179**	**57,125**

8. Այլ գործառնական եկամուտ

		հազար դրամ
	2018թ.	2017թ.
Եկամուտներ ստացված տույժերից և տուգանքներից	16,076	25,111
Եկամուտներ ստացված շնորհներից	5,396	4,609
Եկամուտներ շենքերի, շինությունների օտարումից	999	-
	22,471	29,720

9. Արժեզրկման հակադարձում

		հազար դրամ
	2018թ.	2017թ.
Վարկերի, ավանդների, դեբ. պարտքերի կորուստների վերականգնումից եկամուտ	331,091	128,843
Վարկերի, ավանդների, դեբ. պարտքերի կորուստներին հատկացում	(129,900)	(86,692)
	201,191	42,151

10. Անձնակազմի գծով ծախսեր

		հազար դրամ
	2018թ.	2017թ.
Ծախսեր հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով	(102,946)	(99,497)
Անձնակազմի ուսուցման ծախսեր	(398)	(780)
Արձակուրդների և ոչ աշխատանքային օրերի համար վճարումներ	(7,200)	(7,200)
	(110,544)	(107,477)

11. Այլ ընդհանուր վարչական ծախսեր

		հազար դրամ
	2018թ.	2017թ.
Վարձակալություն	(7,480)	(7,080)
Հեռահաղորդակցություն	(7,384)	(6,689)
Փոխադրամիջոցների սպասարկում	(5,211)	(4,575)
Աուդիտ, խորհրդատվություն	(3,600)	(3,600)
Սարքավորումների սպասարկում	(1,156)	(1,230)
Գրասենյակային ծախսեր	(2,754)	(2,277)
Ապահովագրություն	(4,095)	(2,733)
Շենքի սպասարկում	(2,555)	(2,696)
Գործուղում	(2,543)	(1,233)
Չփոխհատուցվող հարկեր	(863)	(849)
Այլ	(13,413)	(10,381)
	(51,054)	(43,343)

12. Այլ ծախսեր

	2018թ.	2017թ.
		հազար դրամ
Մաշվածություն, ամորտիզացիա	(6,208)	(6,036)
Գովազդի ծախսեր	(489)	(803)
Անդամավճարներ	(5,111)	(3,383)
Ներկայացուցչական ծախսեր	(617)	(482)
Ֆինանսական հաշտարարի գրասենյակի գծով ծախսեր	(948)	(703)
	(13,373)	**(11,407)**

13. Շահութահարկի գծով ծախս

	2018թ.	2017թ.
		հազար դրամ
Հետաձգված հարկի գծով եկամուտ	-	(21,169)
Շահութահարկի գծով ծախս	(29,756)	-
Հետաձգված հարկի գծով ծախս	(5,211)	-
	(34,967)	**(21,169)**

31.12.2017թ.-ի դրությամբ հետաձգված հարկային ակտիվի գերակշիռ մասը կազմում էր հարկային վնասի գծով ճանաչված հարկային ակտիվը 17,816 հազար դրամի չափով:

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2018թ.	2017թ.
		հազար դրամ
Ընթացիկ հաշիվներ բանկերում	8,926	2,783
	8,926	**2,783**

15. Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

	2018թ.	2017թ.
		հազար դրամ
Բանկերում ներդրված ժամկետային ավանդներ	88,173	167,064
Բանկերում ներդրված ժամկետային ավանդների գծով ստացվելիք տոկոսներ, տույժեր և տուգանքներ	2,726	1,219
Պահուստներ	(909)	(1,683)
	89,990	**166,600**

16. Հաճախորդներին տրված ամորտիզացված արժեքով հաշվառվող վարկեր

	2018թ.	2017թ.
		հազար դրամ
Հաճախորդներին տրված համախառն վարկեր	1,749,374	1,129,716
Վարկերի արժեզրկման պահուստ	(15,992)	(22,856)
	1,733,382	**1,106,860**

Տրամադրված վարկերի և փոխառությունների վերլուծությունն ըստ տնտեսության ճյուղերի ներկայացված է ստորև.

հազար դրամ

	2018թ.	2017թ.
Արդյունաբերություն	121,302	69,413
Առևտուր	249,944	115,138
Գյուղատնտեսություն	964,032	596,592
Սպասարկում	53,998	32,103
Շինարարություն	25,965	40,182
Սպառողական	295,678	238,613
Այլ	22,463	37,675
	1,733,382	1,129,716

Վարկերի և փոխատվությունների գծով արժեզրկման պահուստի շարժն ըստ դասերի հետևյալն է.

հազար դրամ

	2018թ.	2017թ. (վերահաշվարկված մնացորդ)
Սկզբնական մնացորդ	(191,250)	(227,484)
Պահուստին հատկացում	506,123	249,560
Ապապահուստավորում	(330,865)	(213,326)
Վերջնական մնացորդ	(15,992)	(191,250)

17. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազար դրամ

	Գրասենյակ ային գույք	Համակարգչ ային սարքավո-րումներ	Փոխադրամ իջոցներ	Վարձ. Գույքի վրա կապիտալ ներդրումներ	Ոչ նյութական ակտիվներ և այլ ՀՄ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
Առ 1 հունվարի 2017	6,463	11,521	22,877	9,937	9,592	60,390
Ավելացում	340	1,944	-	-	144	2,428
Օտարում	(86)	(664)	-	-	(483)	(1,233)
Առ 31 դեկտեմբերի 2017	6,717	12,801	22,877	9,937	9,253	61,585
Ավելացում	680	4,600	-	-	-	5,280
Օտարում	(47)	(1,044)	-	-	(346)	(1,438)
Առ 31 դեկտեմբերի 2018	7,350	16,357	22,877	9,937	8,907	65,427
Կուտակված մաշվածություն						
Աé 1 հունվարի 2017	4,839	7,508	19,778	5,422	5,287	42,834
Ավելացում	529	2,631	1,105	495	1,275	6,035
Օտարում	(86)	(665)	-	-	(439)	(1,190)
Առ 31 դեկտեմբերի 2017	5,282	9,475	20,883	5,917	6,124	47,681
Ավելացում	588	2,792	1,083	495	1,250	6,207
Օտարում	(47)	(1,044)	-	-	(346)	(1,437)
Առ 31 դեկտեմբերի 2018	5,824	11,223	21,966	6,412	7,028	52,451
Հաշվեկշռային արժեք						
Առ 31 դեկտեմբերի 2017	1,435	3,327	1,994	4,020	3,130	13,906
Առ 31 դեկտեմբերի 2018	1,526	5,134	911	3,526	1,879	12,977

18. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

հազար դրամ

	2018թ.	2017թ.
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	17,299	19,884
Դեբիտորական պարտքերի պահուստ	(149)	(149)
	17,150	**19,735**

19. Այլ ակտիվներ

հազար դրամ

	2018թ.	2017թ.
Բռնագանձված գրավ - անշարժ գույք	5,439	20,284
Այլ ակտիվներ	5,750	5,752
Արագամաշ առարկաներ	69	112
	11,258	**26,148**

20. Պարտավորություններ բանկերի նկատմամբ

հազար դրամ

	2018թ.	2017թ.
Բանկերից ստացված վարկեր	20,854	-
	20,854	**-**

21. Ներգրավված փոխառություններ

հազար դրամ

	Փոխատու	Արժույթ	Մարման ժամկետ	Դրույք (%)	2018թ.	2017թ.
Չապահովված փոխառություն	Դար հիմնադրամ	ՀՀ դրամ	Անժամկետ	Անտոկոս	962	1,190
Չապահովված փոխառություն	ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	ՀՀ դրամ	2021թ.	9%	154,549	-
Չապահովված փոխառություն	ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	ՀՀ դրամ	2021թ.	9%	151,812	-
Չապահովված փոխառություն	ԳՖԿ ՕԻԳ***	ՀՀ դրամ	Անորոշ*	7%	92,293	173,913
Չապահովված փոխառություն	ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	ՀՀ դրամ	2022թ.	7%	389,116	389,116
Չապահովված փոխառություն	ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ	ՀՀ դրամ	2020թ.	10%	101,078	151,644
Չապահովված փոխառություն	ԷԿԼՕՖ Հիմնադրամ	ՀՀ դրամ	2021թ.	10%	94,114	71,709
					983,924	**787,572**

* Ցուրաքանչյուր ենթավարկի մայր գումարների վերադարձմանը համապատասխան
*** Գյուղական ֆինանսավորման Կառույց Ծրագրի իրականացման գրասենյակ

Փոխառությունների անվանական արժեքները մոտարկում են իրական արժեքին:

22. Այլ պարտավորություններ

հազար դրամ

	2018թ.	2017թ.
Ապագա ժամանակաշրջանի եկամուտներ	-	1,852
Կրեդիտորական պարտքեր շահութահարկի գծով	576	-
Կրեդիտորական պարտքեր աշխատողներին	5,618	5,598
Կրեդիտորական պարտքեր բյուջեի նկատմամբ	2,636	2,819
Կրեդիտորական պարտքեր մատակարարներին	960	372
Շնորհներ	5,460	7,378
Ստացված կանխավճարներ	9,947	14,475
	25,197	**32,494**

Ստացված կանխավճարներն իրենցից ներկայացնում են հաճախորդների կողմից Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի ձեռք բերման համար իրականացված կանխավճարների գումարները (Ծանոթ. 19):

23. Կանոնադրական Կապիտալ

Կանոնադրական կապիտալը 575,590 հազար ՀՀ դրամ է, որը կազմված է ՍՊԸ-ի 2 սեփականատիրոջից՝ ԷԿԼՕՖ Հիմնադրամ՝ 72,8%, ԷԿԼՕՖ Միջազգային Հիմնադրամ՝ 27.2%:

24. Պայմանական պարտավորություններ

Հարկային ու իրավական պարտավորություններ

ՀՀ հարկային համակարգին բնորոշ է հաճախակի փոփոխվող օրենսդրությունը, որը հաճախ հստակ չէ և մեկնաբանությունների կարիք ունի: Հաճախ դրանց մեկնաբանությունները տարակարծություններ են առաջացնում տարբեր հարկային և իրավասու մարմինների միջև:

Ղեկավարությունը համոզված է, որ իր Ընկերությունը գործունեություն է ծավալել համաձայն օրենսդրության պահանջների:

Ընկերությանը ներկայացվող դատական հայցերի առումով Ընկերության ղեկավարությունը համոզված է, որ դրանց հետևանքով առաջացող պարտավորությունները էական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական վիճակի կամ ապա·ա գործառնությունների արդյունքների վրա:

25. Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն ՀՀՄՍ 24–ի՝ ՝՝Փոխկապակցված կողմերի բացահայտում՝՝, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Ընկերության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Ընկերությունը ԷԿԼՕՖ Հիմնադրամից և ԷԿԼՕՖ Միջազգայինից ունի ներգրավված փոխառություններ:

	31.12.2017թ.	Ավելացում	Նվազում	31.12.2018թ.
Ներգրավված փոխառություն ԷԿԼՕՖ Հիմնադրամ	71,349	76,840	54,618	93,571
Ներգրավված փոխառություն ԷԿԼՕՖ Միջազգային	530,220	-	50,000	480,220
Ներգրավված փոխառություն ԷԿԼՕՖ Միջազգային	-	300,000	-	300,000
Ընդամենը	**601,569**	**376,840**	**104,618**	**873,791**

Ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումները ներկայացված են ստորև

հազար դրամ

	2018թ.	2017թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ վճարումներ	41,879	46,831
Ընդամենը ղեկավար անձնակազմի գծով փոխհատուցումներ	**41,879**	**46,831**

26. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Ստորև ներկայացված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վերլուծությունը ըստ նրանց սպասվող մարման ժամկետների:

առ 31 դեկտեմբերի 2018թ. *հազար դրամ*

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,926	-	-	-	-	8,926
Պահանջներ ռեզիդենտ բանկերի նկատմամբ	2,726	-	680	86,584	-	89,990
Հաճախորդներին տրված վարկեր	68,719	133,628	533,119	362,704	635,210	1,733,380
	80,371	**133,628**	**533,799**	**449,288**	**635,210**	**1,832,296**
Պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	21	-	20,833	-	-	20,854
Ներգրված փոխառություններ	543	13,445	2,890	400,000	567,046	983,924
	564	**13,445**	**23,723**	**400,000**	**567,046**	**1,004,778**
Զուտ դիրք	**79,807**	**120,183**	**510,076**	**49,288**	**68,164**	**827,518**
Կուտակային ճեղքվածք	**79,807**	**199,990**	**710,067**	**759,354**	**827,518**	

առ 31 դեկտեմբերի 2017թ.

հազար դրամ

	Ցպահանջ և մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ակտիվներ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	2,783	-	-	-	-	2,783
Պահանջներ կառավարության նկատմամբ	12,795	-	153,804	-	-	166,600
Հաճախորդներին տրված վարկեր	65,745	128,900	506,242	403,417	2,556	1,106,860
	81,323	**128,900**	**660,046**	**403,417**	**2,556**	**1,276,242**
Պարտավորություններ						
Ներգրավված փոխառություններ	360	8,896	72,993	150,000	555,323	787,572
	360	**8,896**	**72,993**	**150,000**	**555,323**	**787,572**
Զուտ դիրք	**80,963**	**120,004**	**587,053**	**253,417**	**(552,767)**	**488,670**
Կուտակային ճեղքվածք	**80,963**	**200,967**	**788,020**	**1,041,437**	**488,670**	

27. Ռիսկի կառավարում

Ընկերության գործունեությանը բնորոշ է ֆինանսական ռիսկերի բազմազանություն, և այդ գործունեությունը ներառում է ռիսկի կամ ռիսկերի համախմբության որոշակի մակարդակի վերլուծություն, գնահատում, ընդունում և կառավարում:

Ռիսկը հանդիսանում է ֆինանսական գործունության անբաժանելի մասը, և գործառնական ռիսկերը գործունեության ծավալման անխուսափելի հետևանքն են: Այդ պատճառով Ընկերության նպատակն է հասնել ռիսկերի և օգուտների միջև համապատասխան հավասարակշռության և նվազագույնի հասցնել Ընկերության վիճակի վրա դրանց անցանկալի ազդեցությունները:

Ընկերությունը նպատակ ունի ախտորոշելու և վերլուծելու ռիսկերը, սահմանելու ռիսկի համապատասխան սահմանաչափերը և վերահսկումները, և վերահսկելու ռիսկերը և համապատասխանությունը սահմանաչափերին՝ օգտագործելով արժանահավատ և ժամանակակից տեղեկատվական համակարգերը:

Ռիսկի կառավարումը իրականացնում է Ընկերության ղեկավար անձնակազմը: Ղեկավարությունը ախտորոշում, գնահատում և հեջավորում է ֆինանսական ռիսկերը՝ սերտորեն համագործակցելով Ընկերության գործառնական միավորների հետ: Ռիսկի կարևորագույն տեսակներն են պարտքային ռիսկը, իրացվելիության ռիսկը, շուկայական ռիսկը, գործառնական ռիսկը և այլ գործառնական ռիսկերը: Շուկայական ռիսկը ներառում է տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը:

25.1 Պարտքային ռիսկ

Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, որն իրենից ներկայացնում է ռիսկ, որ պայմանագրի մյուս կողմը, չիրականացնելով իր պարտավորությունը, Ընկերությանը կպատճառի ֆինանսական վնաս: Պարտքային ռիսկը Ընկերության գործունեության կարևորագույն ռիսկն է, այդ պատճառով Ղեկավար անձնակազմը ավելի մեծ ուշադրությամբ է վերահսկում այն: Պարտքային ռիսկը հիմնականում կապված է պարտքային գործունեության հետ:

Պարտքային ռիսկի առավելագույն չափն առանց գրավի կամ այլ ապահովման

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է պարտքային ռիսկի վատագույն տարբերակը առ 31 դեկտեմբեր 2018թ. և 2017թ., առանց հաշվի առնելու ցանկացած գրավ կամ այլ ապահովումներ: Հաշվեկշռային ակտիվների առումով, պարտքային ռիսկերը հիմնված են հաշվեկշռային զուտ արժեքների վրա:

հազար դրամ

	Ծանոթագրություն	Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 31 դեկտեմբեր 2018թ.	Համախառն առավելագույն ռիսկի չափը առ 31 դեկտեմբեր 2017թ.
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	8,926	2,783
Պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	89,990	166,600
Հաճախորդներին տրված վարկեր	16	1,733,380	1,106,860
Ընդամենը պարտքային ռիսկ		1,832,296	1,276,243

Պարտքային ռիսկի առավելագույն չափի կենտրոնացումներ

Աշխարհագրական սեգմենտներ

2018թ. և 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պարտքային ռիսկերը ամբողջությամբ կենտրոնացված են ՀՀ-ում:

Տնտեսության ճյուղեր

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է Ընկերության պարտքային ռիսկերի կենտրոնացումները հաշվեկշռային արժեքներով առ դեկտեմբերի 31-ը՝ դասակարգված ըստ պայմանագրային կողմի տնտեսության ճյուղի:

հազար դրամ

	Ֆին. հաստատություններ	Գյուղատնտեսություն	Արդյունաբերություն	Շինարարություն	Առևտուր	Սպասարկում	Սպառողական	Այլ	Ընդամենը
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,926		-	-	-	-		-	8,926
Պահանջներ ֆինանսական կազմ.նկատմամբ	89,990		-	-	-	-		-	89,990
Հաճախորդներին տրված վարկեր	-	964,032	121,302	25,965	249,944	53,998	295,678	22,461	1,733,380
Առ 31/12/2018թ.	98,916	964,032	121,302	25,965	249,944	53,998	295,678	22,461	1,832,296
Առ 31/12/2017թ.	169,383	584,522	68,009	39,369	112,809	31,454	233,785	36,913	1,276,243

Ռիսկի սահմանաչափերի վերահսկողություն և զսպողական քաղաքականություն

Ընկերությունը ղեկավարում, սահմանափակում և վերահսկում է ցանկացած բացահայտված պարտքային ռիսկի կենտրոնացումները՝ մասնավորապես, մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի, ինչպես նաև արդյունաբերական և աշխարհագրական սեգմենտների կտրվածքով:

Պարտքային ռիսկի մակարդակը վերահսկելու նպատակով Ընկերությունը սահմանում է մեկ փոխառուի կամ փոխառուների խմբի նկատմամբ ռիսկի ընդունելի մակարդակի սահմանաչափերը: Նման ռիսկերը պարբերաբար վերահսկվում են և ենթակա են տարեկան, իսկ անհրաժեշտության դեպքում, ավելի հաճախակի վերանայման:

Պարտքային ռիսկի չափը կառավարվում է նաև փոխառուների և հնարավոր փոխառուների՝ մայր գումարի և տոկոսավճարների վճարման հնարավորության վերլուծության և, անհրաժեշտության դեպքում, սահմանաչափերի փոփոխության միջոցով:

Գրավ

Ընկերությունը կիրառում է մի շարք կանոններ և միջոցներ՝ պարտքային ռիսկը մեղմելու նպատակով: Դրանցից ամենատարածվածը տրամադրված դրամական միջոցների դիմաց գրավ վերցնելն է, որը համընդհանուր գործելակերպ է: Ընկերությունը սահմանում է ուղեցույցներ՝ գրավի որոշակի տեսակների ընդունելի լինելու և պարտքային ռիսկի զսպման վերաբերյալ: Վարկերի և փոխատվությունների դիմաց հիմնական գրավների տեսակներն են.

- Հիփոթեքային պայմանագրով գրավադրված անշարժ գույք
- Երաշխավորությունները

Ստորև ներկայացված է վարկային պորտֆելի վերլուծությունն ըստ գրավի տեսակների.

		հազար դրամ
	2018թ.	2017թ.
Անշարժ գույք	246,701	83,264
Սարքավորումներ	2,408	-
Փոխադրամիջոցներ	18,619	35,673
Երաշխավորություն	1,481,644	1,010,779
	1,749,372	1,129,716

Դեկտեմբերի 31-ի դրությամբ դուրս գրված վարկերը, ունեն հետևյալ տեսքը

		հազար դրամ
	2018թ.	2017թ.
Դուրս գրված վարկեր	342,345	540,310
Դուրս գրված տոկոսներ, տույժեր	68,927	281,395
Դուրս գրված դեբիտորական պարտքեր	11,689	12,997
	422,961	834,702

25.2 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների իրական արժեքի կամ դրանից ստացված դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույքի, արտարժույթի բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների փոփոխությունների ազդեցությանը:

Արտարժութային ռիսկ

Ընկերության արտարժույթի ռիսկի վերլուծությունն ըստ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ունի հետևյալ տեսքը՝

հազար դրամ

	ՀՀ դրամ	Ազատ փոխարկելի արժույթ	Ոչ փոխարկելի արժույթ	Ընդամենը
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8,926	-	-	8,926
Պահանջներ բանկերի նկատմամբ	89,990	-	-	89,990
Հաճախորդներին տրված վարկեր	1,733,380	-	-	1,733,380
	1,832,296	-	-	**1,832,296**
Պարտավորություններ				
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	20,854	-	-	20,854
Ներգրաված փոխառություններ	983,924	-	-	983,924
	1,004,778	-	-	**1,004,778**
Զուտ դիրք 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**827,518**	-	-	**827,518**
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,264,650	11,593	-	1,276,243
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	787,572	-	-	787,572
Զուտ դիրք 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**477,078**	**11,593**	-	**488,671**

25.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը չի կարողանա մարել իր վճարման պարտավորությունները սթրեսային և նորմալ իրավիճակներում: Այս ռիկսի սահմանափակման

համար Ղեկավարությունը կառավարում է ակտիվները հաշվի առնելով իրացվելիության ռիսկը և վերլուծում է ապագա դրամական հոսքերը և իրացվելիությունը օրական կտրվածքով: Սա ներառում է նաև սպասվելիք դրամական հոսքերի գնահատումները և բարձր իրացվելի ապահովվածության հասանելիությունը, որն անհրաժեշտության դեպքում կարող է օգտագործվել լրացուցիչ ֆինանսավորում ստանալու նպատակով:

Ընկերության իրացվելիության վերահսկողությունը պահանջում է հաշվի առնել իրացվելի ակտիվների այն մակարդակը, որն անհրաժեշտ է պարտավորությունները մարելու համար ըստ ժամկետների, ինչպես նաև ապահովել ֆինանսավորման տարբեր աղբյուրների հնարավորությունը, ֆինանսավորման արտակարգ պլանի առկայությունը և վերահսկել իրացվելիության հաշվեկշռային գործակիցները: Ստորև ներկայացված աղյուսակը ամփոփում է Ընկերության ֆինանսական պարտավորությունները ըստ մարման ժամկետների՝ 2018թ. 31 դեկտեմբերի դրությամբ, հիմնվելով չզեղչված վճարումների պայմանագրային պարտավորությունների վրա: Ցպահանջ վճարումները դասակարգված են այն ենթադրությամբ, որ դրանք կպահանջվեն անմիջապես:

Առ 31 դեկտեմբեր 2018թ.

հազար դրամ

	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Պարտավորություններ բանկերի նկատմամբ	208	312	21,041	-	-	21,561
Ներգրված փոխառություններ	543	33,503	40,722	457,442	572,036	1,104,246
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**751**	**33,815**	**61,763**	**457,442**	**572,036**	**1,125,807**

Առ 31 դեկտեմբեր 2017թ.

հազար դրամ

	Ցպահանջ, մինչև 1 ամիս	1-3 ամիս	3-12 ամիս	1-3 տարի	3 տարուց ավել	Ընդամենը
Ֆինանսական պարտավորություններ						
Ներգրված փոխառություններ	360	13,308	99,657	256,559	568,631	938,514
Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ	**360**	**13,308**	**99,657**	**256,559**	**568,631**	**938,514**

Կապիտալի համարժեքություն

Ընկերության կապիտալի կառավարման առաջնային նպատակն այն է, որ Ընկերությունը համապատասխանի հաստատված արտաքին պահանջներին: Ընկերությունը շահագրգռված է պահպանելու բարձր վարկային վարկանիշ և կապիտալի առողջ նորմատիվներ՝ իր գործունեությունը ամրապնդելու և սեփական կապիտալը հետևողականորեն աճեցնելու գործում:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը՝ կատարելով ճշգրտումներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների և ռիսկի բնույթի փոփոխության հետևանքով: Նախորդ տարվա համեմատ փոփոխություններ չեն եղել Ընկերության նպատակներում, քաղաքականությունում և գործողություններում:

Ռիսկով կշռված ակտիվները չափվում են ըստ ռիսկի կշիռների ստորակարգության՝ դասակարգվելով համաձայն վարկային, շուկայական և գործառնական ռիսկերի բնույթի և գնահատման:

Ըստ ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված՝ ներկայումս գործող կապիտալի պահանջների, ունիվերսալ վարկային կազմակերպությունները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պետք է ապահովեն 150,000 հազար ՀՀ դրամ նվազագույն կապիտալ (2017թ-իդեկտեմբերի 31-ին՝ 150,000 հազար ՀՀ դրամ):